# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*02-ը մայիսի 2023թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 26*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***Ն 61 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 02.05.2023թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 21* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |
| ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

**<u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ</u>**

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/*

2. Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման (ՍՆՏԶ) ԼՖ Ծրագրին մասնակցության մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*02-ը մայիսի 2023թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀՏԶՀ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ (ՍՆՏԶ) ԼՖ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 26*

*/Զեկուցող՝ Շ.ՎԱՀԱՆՅԱՆ/*

***Ν 62 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով՝

***<<Ուշիի մանկապարտեզի վերակառուցում>>***

2. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 7% ներդրում՝ ՍՆՏԶ Ծրագրի պահանջներին համապատասխան:
3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:
4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ:
5. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 21* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ
ՎԱՐԴԳԵՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*02-ը մայիսի 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 26*

*/Զեկուցող՝ Ս. ԹՈՒՄԱՍՅԱՆ/*

***<u>N 63 - Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով Դիանա Նիկողոսյանի 27.04.2023թ. N 4121 և 4122, Թամարա Սարգսյանի և Սոնա Խաչատրյանի 27.04.2023թ. N 4153՝ հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հավանություն տալ Դիանա Ստեփանի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0457-0040 ծածկագրով 0,0529հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը՝ բնակելի տան և քարե պարսպի կառուցման նպատակով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Դիանա Ստեփանի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0457-0041 ծածկագրով 0,0513հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը՝ բնակելի տան կառուցման նպատակով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Թամարա Գուրգենի Սարգսյանին և Սոնա Մուրադի Խաչատրյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0600-0006 ծածկագրով 0,25հա գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,16164հա վարելահողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական

նշանակությունը՝ արդյունաբերական փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 20* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ |
| ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Մ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն